ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Ալավերդի համայնքի Ալավերդու համայնքապետարանի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության ծառայությունների ձեռք բերման նպատակով կազմակերպված **ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/7** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 10.02.2026թ կնքված **ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/7** պայմանագրում 2026 թվականի 04. 15-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1- Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N-526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետը,ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/7 ծածկագրով գնման պայմանագրի 7.10 կետը և պատասխանատու ստորաբաժանման եզրակացությունը , համաձայնագրի կողմերը որոշմամբ կատարվել է վերնագրի շտկում ,նվազեցվել է պայմանագրի գինը և ամբողջությամբ լուծվել 2-րդ չափաբաժինը:

Փոփոխության նկարագրություն – ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/7 ծածկագրով գնման պայմանագրում կատարվել է վերնագրի շտկում ,պայմանագրի գինը նվազեցվել է 405000 /չորս հարյուր հինգ հազար/ դրամով և ամբողջությամբ լուծել 2-րդ չափաբաժինը :

Փոփոխության հիմնավորում - Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ Կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N-526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Պատվիրատու՝ Ալավերդու համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
Ի ԼՐՈՒՄՆ ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/7 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Ալավերդի 15.04.2025թ

Ալավերդու համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ.Ղումաշյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և << >> ՍՊԸ -ը, ի դեմս տնօրեն , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկա՝

1Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունը, որ «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ի հետ կնքված N ԼՄԱՀԳՀԾՁԲ-26/7 պայմանագրի շրջանակներում նախատեսված ***չափաբաժին 1-ի 6-րդ կետով*** ներկայացված Ալավերդի համայնքի Ալավերդի և Ախթալա քաղաքների, Աքորի, Ծաղկաշատ, Թեղուտ, Շնող գյուղերի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ արտահայտությունը՝ վերնագիրը, տեխնիկական վրիպակի պատճառով բնութագիր բաժնում նշվել է սխալմամբ, նշված աշխատանքների փոխարեն պետք է կարդալ հետևյալ աշխատանքները:

Հ/Հ	**Ծրագրի անվանումը**
1	Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 2/23 և 3/21 շենքերի կոյուղագծերի կառուցման աշխատանքներ
2	Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Էնգելս 19 բազմաբնակարան շենքի բակային տարածքի բարեկարգման և հենապատի կառուցման աշխատանքներ
3	Ալավերդի համայնքի Հաղպատ բնակավայրի 06-060-0006-0006 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող 500 մ/խ խմելու ջրի ջրամբարի կապիտալ վերանորոգման աշխատանքներ
4	Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 1/8 բազմաբնակարան շենքի բակային տարածքի բարեկարգման, ասֆալտապատման և 1/9 շենքի հետնամասով անցնող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ
5	Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա 7 բազմաբնակարան շենքի համար նոր կոյուղագծի կառուցման, շենքի բակային տարածքի ասֆալտապատման աշխատանքներ
6	Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամաի թիվ 2/23 /1600 քմ / և թիվ 3/21 /1400 քմ/ բազմաբնակարան շենքերի բակի և շրջակայքի ասֆալտապատման, մայթի գունավոր բետոնե սալիկներով սալիկապատման, ջրահեռացման, կոյուղատար խողովակների և դիտահորերի նորոգման կամ վերատեղադրման, աստիճանահարթակի և աստիճանների վերանորոգման աշխատանքներ
7	Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սայաթ Նովա 1 հասցեին կից հեղեղատար համակարգի կառուցում և գոյություն ունեցող կոյողագծի դիտահորի նորոգման աշխատանքներ
8	Ալավերդի համայնքի Թեղուտ բնակավայրում ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ

9	Ալավերդի համայնքի ճանապարհների կապիտալ վերանորոգում՝ ասֆալտապատմամբ /Շնող բնակավայրի 1-ին և 7-րդ փողոցներում, Թեղուտ բնակավայրի 2-րդ փողոց, 1-ին փակուղում հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքներ/
10	Շնող բնակավայրի 1-ին և 7-րդ փողոցներում, Թեղուտ բնակավայրի 2-րդ փողոց, 1-ին փակուղում հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքներ /հենապատերի և պարապետերի կառուցում/
11	Արևաձագ բնակավայրում խաղահրապարակի/հանգստի գոտու կառուցում
12	Ալավերդի համայնքի Օձուն բնակավայրի մշակութի տան դահլիճի վերանորոգման աշխատանքներ
13	պատերազմում զոհվածներին նվիրված հուշարձանի կառուցում

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետը, ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/7 ծածկագրով պայմանագրի 7.10 կետը և պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունը համաձայնագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին նվազեցնել ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/7 ծածկագրով պայմանագրի գինը՝ 405000/չորս հարյուր հինգ հազար/ դրամով և ամբողջությամբ լուծել 2-րդ չափաբաժինը:

Լուծել «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ի հետ կնքված N ԼՄԱԳՀԾՁԲ-26/7 պայմանագիրը ***2-րդ չափաբաժնի*** մասով:

Հ/Հ	**Ծրագրի անվանումը**	**Օբյեկտի նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների արժեքը (ՀՀ դրամ)**	**Մասհանվող տոկոսաչափը (փորձաքննության ծախսերը՝ %)**	**փորձաքննության ծախսը՝ (ՀՀ դրամ)**
1	Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի մարզադպրոցի վերանորոգման և մարզադպրոցի շենքին կից փակ լողավազանի կառուցման աշխատանքներ	2 000 000		200 000
2	Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրի թիվ 5 մանկապարտեզի շենքը որպես վարչական շենքի վերակառուցման, վերանորոգման աշխատանքներ	800 000		88 000
3	Ալավերդի համայնքի Շնող բնակավայրի մշակույթի տան	800 000		88 000

	մասնակի վերանորոգման աշխատանքներ			
4	Ալավերդի համայնքի Օձուն բնակավայրի մշակութի տան դահլիճի վերանորոգման աշխատանքներ	500 000		60 000
Ընդամենը՝		**4 100 000**	**10**	**410 000**

Սույն փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ***2-րդ չափաբաժնի*** օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների արժեքները փոփոխվել են՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման մրցույթը մի քանի անգամ չկայանալու պատճառով: Միաժամանակ, պարզ փորձաքննության ծառայության ձեռքբերման մրցույթը հայտարարվել է առանց նշված չափաբաժնով նախատեսված օբյեկտների նախագծման ծառայությունների ձեռքբերման՝ փորձաքննության ծախսերի հաշվարկը կատարելով վերոնշյալ գների հիմա վրա: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման մրցույթի չկայանալը հանգեցրել է արժեքների հաշվարկման վերանայման անհրաժեշտության: Նշված հանգամանքներից ելնելով՝ իրականացվել է նախագծանախահաշվային աշխատանքների մշակման համար անհրաժեշտ ծախսերի նոր հաշվարկ:

Հ/Հ	**Ծրագրի անվանումը**	**Օբյեկտի նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների շտկված արժեքը (ՀՀ դրամ)**	**Մասհանվող տոկոսաչափը (փորձաքննության ծախսերը՝ %)**	**փորձաքննության ծախսը՝ (ՀՀ դրամ)**
1	Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի մարզադպրոցի վերանորոգման և մարզադպրոցի շենքին կից փակ լողավազանի կառուցման աշխատանքներ	17 000 000	7	1 190 000
2	Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրի թիվ 5 մանկապարտեզի շենքը որպես վարչական շենքի վերակառուցման, վերանորոգման աշխատանքներ	3 500 000	10	350 000
3	Ալավերդի համայնքի Շնող բնակավայրի մշակույթի տան	4 500 000	10	450 000

	մասնակի վերանորոգման աշխատանքներ			
4	Ալավերդի համայնքի Օձուն բնակավայրի մշակութի տան դահլիճի վերանորոգման աշխատանքներ	500 000	12	60 000
Ընդամենը՝		25 500 000		2 050 000

ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 17-ի N 1656-Ն որոշման հավելվածի 36-րդ կետի համաձայն՝ օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարտադիր փորձաքննության ծախսերը հաշվարկվում են օբյեկտի նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների արժեքից՝ աղյուսակ 4-ով սահմանված մասհանվող տոկոսաչափերով:

Հաշվի առնելով, որ N ԼՄԱՀԳՀԾՁԲ-26/7 պայմանագրի **չափաբաժին 2-ի** համար նախապես հաշվարկված 410 000 ՀՀ դրամ արժեքը չի համապատասխանում օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների շտկված արժեքներին, պայմանագիրը լուծել ***2-րդ չափաբաժնի*** մասով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրի մեկնաբանման, իրագործման կամ կիրառման ժամանակ ծագած տարաձայնությունները, ինչպես նաև համաձայնագրից բխող բոլոր հարցերը լուծվում են երկկողմ բանակցությունների ճանապարհով, համաձայնության չգալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Սույն համաձայնագիրը գործողության մեջ է մտնում ստորագրման պահից, հանդիսանում է ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/7 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը :

2.3 Պայմանագրի `սույն համաձայնագրում չնշված կետերը մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության Գործառնական Վարչություն
ՀՎՀՀ 06967886
Հ/Հ 900262121057
Համայնքի ղեկավար՝ Դ.Ղումաշյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
ք. Գյումրի, Շիրակացի փ. 83շ, բն. 40
ՀՎՀՀ 05547385
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030206282300
Տնօրեն՝ Ն.Սիրեկանյան

(ստորագրություն)
Կ.Տ.